Հավելված
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2012թ.փետրվարի 24-ի N 36-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 6-ին կայանալիք հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
1	Դիտորդների հավատարմագրում իրականացվում կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարվում է. ***ընտրություն նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ***	30, մաս 2	24.02.2012ից մինչև 26.04.2012	ԿԸՀ
2	Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին եթերաժամ տրամադրող հեռուստաընկերությունները և ռադիոընկերությունները (անկախ սեփականության ձևից) իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը հրապարակում են. ***ընտրության նշանակումից ոչ ուշ, քան 10 օր հետո***	19, մաս 4, 5	մինչև 5.03.2012	Հեռուստառադիո ընկերություններ
3	Ազգային ժողովի յուրաքանչյուր խմբակցություն կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունում Հայաստանի Հանրապետությունում աուդիտորի որակավորում ստացած ընտրական իրավունք ունեցող մեկ աուդիտոր նշանակում է. ***ընտրության նշանակումից հետո՝ 10-օրյա ժամկետում***	28, մաս 4	մինչև 5.03.2012	Ազգային ժողովի խմբակցություններ
4	Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուների գրանցման փաստաթղթերը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 55, և ոչ ուշ, քան 45 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	127, մաս 3	12.03.2012 - 22.03.2012 մինչև ժամը 18:00	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ
5	Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուների գրանցման փաստաթղթերը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 55, և ոչ ուշ, քան 45 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	127, մաս 5	12.03.2012 - 22.03.2012 մինչև ժամը 18:00	Թեկնածու կամ թեկնածուի լիազոր ներկայացուցիչ
6	Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով գովազդային վահանակներում քարոզչական պաստառներ տեղադրելու համար հայտերը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են, ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 55, և ոչ ուշ, քան 45 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	20, մաս 6	12.03.2012 - 22.03.2012 մինչև ժամը 18:00	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ
7	Կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 20 օր հետո***	18, մաս 3	մինչև 15.03.2012	Մարզպետ, Երևանի քաղաքապետ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
8	Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը հրապարակվում և կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 20 օր հետո***	19, մաս 10	մինչև 15.03.2012	ՀՌԱՀ
9	Զինվորական մասերում հաշվառված ընտրողների թիվը՝ համայնքի ղեկավարին, լիազոր մարմին և կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 50 օր առաջ***	8, մաս 9	մինչև 17.03.2012	ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ ոստիկանություն
10	Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամների ցուցակը լիազոր մարմնին ներկայացվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 50 օր առաջ***	60, ԿՀԸ որոշում 31.01.12թ. N 19-Ն	մինչև 17.03.2012	ՀՀ արտաքին գործերի նախարարություն
11	Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձևից) արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների՝ ընտրելու իրավունք ունեցող աշխատակիցների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամների ցուցակը լիազոր մարմին ներկայացվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 50 օր առաջ***	60, ԿՀԸ որոշում 31.01.12թ. N 19-Ն	մինչև 17.03.2012	Իրավաբանական անձի ղեկավար
12	Համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին որոշում ընդունվում է. ***ընտրությունները նշանակվելուց հետո՝ 21-օրյա ժամկետում***	20, մաս 3, 1-ին պարբ.	մինչև 16.03.2012	Երևանի քաղաքապետ, Համայնքի ղեկավար
13	Կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին տրամադրելու համար 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով վահանակների քանակի, մակերեսների, դրանց գտնվելու վայրերի և վարձավճարների վերաբերյալ տեղեկատվություն կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է ***ընտրությունները նշանակվելուց հետո՝ 21-օրյա ժամկետում***	20, մաս 6	մինչև 16.03.2012	Արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպություններ կամ մարմիններ
14	10 000 և ավելի ընտրող ունեցող համայնքի դեպքում, քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին համայնքի ղեկավարի որոշումը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***որոշումն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում***	20, մաս 3, 2-րդ պարբ.	մինչև 19.03.2012	Համայնքի ղեկավար
15	Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45, և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև 18.00-ն***	127, մաս 4	22.03.2012 - 1.04.2012 մինչև ժամը 18:00	ԿԸՀ
16	Ընտրական տեղամասերը կազմավորվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ***	14, մաս 1	մինչև 22.03.2012	Լիազոր մարմին

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
17	Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուների գրանցումը կատարվում է. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45, և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	127, մաս 6	22.03.2012 - 1.04.2012 մինչև ժամը 18:00	ԸԸՀ
18	Տեղամասային կենտրոնները սահմանվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ***	16, մաս 1	մինչև 24.03.2012	Համայնքի ղեկավար
19	Կալանավորված անձանց պահելու վայրում տեղամասային կենտրոնները սահմանվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ***	16, մաս 1 15, մաս 4	մինչև 24.03.2012	Քրեակատարողական հիմնարկի ղեկավար
20	Ընտրական տեղամասերի հերթական համարները սահմանվում և կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***սահմանվելուց հետո երկօրյա ժամկետում***	50, մաս 1, կետ 3	մինչև 26.03.2012	ԸԸՀ
21	ՀՀ ընտրողների ռեգիստրը՝ ըստ ընտրական տեղամասերի, կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում որոնման հնարավորությամբ տեղադրելու համար՝ էլեկտրոնային տարբերակով կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է ՝ ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր առաջ***	7, մաս 4 ԿՀԸ որոշում 31.01.12թ. N 19-Ն	մինչև 26.03.2012	Լիազոր մարմին
22	ՀՀ ընտրողների ռեգիստրը՝ ըստ ընտրական տեղամասերի, կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում՝ որոնման հնարավորությամբ տեղադրվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր առաջ***	7, մաս 4	մինչև 26.03.2012	ԿԸՀ
23	էլեկտրոնային եղանակով քվեարկող ընտրողների ցուցակը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր առաջ***	60, ԿՀԸ որոշում 31.01.12թ. N 19-Ն	մինչև 26.03.2012	Լիազոր մարմին
24	Ընտրողների ցուցակները՝ ըստ ընտրական տեղամասերի, համացանցում՝ ներբեռնելու հնարավորությամբ տեղադրվում են, ***քվեարկության օրվանից 40 օր առաջ***	11, մաս 2	27.03.2012-ին	Լիազոր մարմին
25	Ընտրողների ցուցակների մեկ օրինակ տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին տրամադրվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ*** *ընտրողների ցուցակում ընտրողի տվյալների դիմաց առկա «էլ. քվեարկություն» նշումը նշանակում է, որ տվյալ ընտրողը ընդգրկված է էլեկտրոնային եղանակով քվեարկող ընտրողների ցուցակում*	10, մաս 1 ԿՀԸ որոշում 31.01.12թ. N 19-Ն	մինչև 27.03.2012	Լիազոր մարմին
26	Ընտրողների ցուցակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է. ***քվեարկության օրվանից 40 օր առաջ***	11, մաս 3	27.03.2012-ին	Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող
27	Ընտրողների ցուցակներն էլեկտրոնային կրիչով կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ***	10, մաս 4	մինչև 27.03.2012	Լիազոր մարմին

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
28	էլեկտրոնային եղանակով քվեարկող ընտրողների ցուցակը կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում է. ***ցուցակը ստանալու օրվանից 2 օրվա ընթացքում***	60, ԿՀԸ որոշում 31.01.12թ. N 19-Ն	մինչև 28.03.2012	ԿԸՀ
29	Կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հանրային ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը սահմանվում է. ***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հաջորդ օրը***	19, մաս 2	2.04.2012-ին	ԿԸՀ
30	Էլեկտրոնային եղանակով քվեարկող ընտրողների թվին համապատասխան անհատական ծածկագրեր պարունակող ծրարները ընտրողներին ուղարկելու համար՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությանը և համապատասխան իրավաբանական անձի ղեկավարին տրամադրվում են. ***էլեկտրոնային եղանակով քվեարկող ընտրողների ցուցակը ստանալուց հետո, ոչ ուշ, քան 10 օր հետո***	ԿՀԸ որոշում 31.01.12թ. N 19-Ն	մինչև 5.04.2012	ԿԸՀ
31	Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները կուսակցության գույքի և ֆինանսական միջոցների մասին հայտարարագիր կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են. ***գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում***	6, մաս 6	մինչև 6.04.2012	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ
32	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածուներն իրենց գույքի և եկամուտների մասին հայտարարագիր կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են. ***գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում***	6, մաս 5	մինչև 6.04.2012	Թեկնածուներ, կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ
33	Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուներն իրենց գույքի և եկամուտների մասին հայտարարագիր համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնում են. ***գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում***	6, մաս 5	մինչև 6.04.2012	Թեկնածու կամ թեկնածուի լիազոր ներկայացուցիչ
34	ՀՀ ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը՝ նաև յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակում ընդգրկված ընտրողների թիվ հրապարակվում է. ***քվեարկության օրվանից առաջ 30-րդ օրը***	6, մաս 8	6.04.2012-ին	Լիազոր մարմին
35	Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխումը՝ ըստ ընտրական տեղամասերի կատարվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 30 օր առաջ***	42, մաս 5, ԿԸՀ որոշում 30.06.11թ. N 14-Ն	մինչև 6.04.2012	ԿԸՀ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
36	Տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու մասին հայտերը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	42, մաս 6	6.04.2012 - 11.04.2012 մինչև ժամը 18:00	Աժ խմբակցություն ունեցող կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ), ԸԸՀ
37	Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է. ***գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը, ավարտվում՝ քվեարկության օրվանից մեկ օր առաջ***	18, մաս 1	8.04.2012 - 4.05.2012 մինչև ժամը 24:00	Ընտրողներ, թեկնածուներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ
38	Տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին նիստը տեղամասային կենտրոնում հրավիրվում է. ***կազմավորման օրվանից հետո՝ 3-րդ օրը, ժամը 12.00-ին***	42, մաս 7	14.04.2012 ժամը 12:00-ին	ՏԸՀ
39	Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը՝ նաև յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակում ընդգրկված ընտրողների թիվ հրապարակվում է. ***քվեարկության օրվանից առաջ 20-րդ օրը***	6, մաս 8	16.04.2012-ին	Լիազոր մարմին
40	Թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են. ***նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ օրը***	27, մաս 1	17.04.2012-ին	Թեկնածուներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ
41	Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ մշտադիտարկման արդյունքները, ՀՌԱՀ-ի եզրակացությունը հրապարակվում և կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են. ***ոչ ուշ, քան նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի 10-րդ օրը***	19, մաս 11	17.04.2012-ին	ՀՌԱՀ
42	Թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները ինքնաբացարկի մասին դիմում կարող են ներկայացնել. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	121, մաս 3 և 4	մինչև 26.04.2012 մինչև ժամը 18:00	Թեկնածուներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ
43	Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը՝ նաև յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակում ընդգրկված ընտրողների թիվ հրապարակվում է. ***քվեարկության օրվանից առաջ 10-րդ օրը***	6, մաս 8	26.04.2012-ին	Լիազոր մարմին
44	Քվեաթերթիկների տպագրման համար ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք՝ ըստ ընտրատարածքների և ընտրական տեղամասերի կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում է. ***քվեարկության օրվանից 10 օր առաջ***	10, մաս 2 57, մաս 6	26.04.2012-ին	Լիազոր մարմին

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
45	Զինվորական մասերում հաշվառված ընտրողների ցուցակները զորամասերում՝ զինծառայողների համար տեսանելի տեղում, փակցվում են. ***քվեարկության օրվանից 10 օր առաջ***	11, մաս 5	26.04.2012-ին	Զինվորական մասի հրամանատար
46	ԸԸՀ-ի տրամադրության տակ գտվող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական քարոզչության նյութերը կալանավորված անձանց պահելու վայրեր ուղարկվում են. ***քվեարկության օրվանից 10 օր առաջ***	61, մաս 2 ԿԸՀ որոշում 29.07.11թ. N 44-Ն	26.04.2012-ին	ԸԸՀ նախագահ
47	Քվեաթերթիկները տպագրվում են. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 10, և ոչ ուշ, քան 3 օր առաջ***	57, մաս 6	26.04.2012 - 3.05.2012	ԿԸՀ
48	Էլեկտրոնային եղանակով քվեարկությունը սկսվում է ***քվեարկության օրվանից 9 օր առաջ, Երևանի ժամանակով 08:00***	ԿԸՀ որոշում 31.01.12թ. N 19-Ն	27.04.2012-ին ժամը 08:00-ին	ԿԸՀ, ընտրողներ
49	Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ մշտադիտարկման արդյունքները, ՀՌԱՀ-ի եզրակացությունը հրապարակվում և կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են. ***ոչ ուշ, քան նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի 20-րդ օրը***	19, մաս 11	27.04.2012-ին	ՀՌԱՀ
50	Թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են. ***նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 20-րդ օրը***	27, մաս 1	27.04.2012-ին	Թեկնածուներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ
51	ԱԺ-ի համամասնական ընտրակարգով քվեարկությանը մասնակցելու համար այլ համայնքի հաշվառում ունեցող ընտրողները ըստ գտնվելու վայրի ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու մասին դիմում լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին ներկայացնում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ***	8, մաս 3	մինչև 29.04.2012	Ընտրողներ, Լիազոր մարմին
52	ՀՀ-ում հաշվառում չունեցող ընտրողները ԱԺ-ի համամասնական ընտրակարգով քվեարկությանը մասնակցելու համար ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու մասին դիմում լիազոր մարմին ներկայացնում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ***	8, մաս 4	մինչև 29.04.2012	ՀՀ-ում հաշվառում չունեցող ՀՀ քաղաքացիներ, Լիազոր մարմին
53	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները, դրոշմակնիքները և տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքները ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին հանձնվում են. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 5, և ոչ ուշ, քան 3 օր առաջ***	58, մաս 3	1.05.2012 - 3.05.2012	ԿԸՀ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
54	Էլեկտրոնային եղանակով քվեարկությունն ավարտվում է ***քվեարկության օրվանից 5 օր առաջ, Երևանի ժամանակով 20:00***	ԿԸՀ որոշում 31.01.12թ. N 19-Ն	1.05.2012-ին ժամը 20:00-ին	ԿԸՀ, ընտրողներ
55	Ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում լիազոր մարմին ներկայացվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ***	12, մաս 1	մինչև 1.05.2012	Ընտրողներ, Լիազոր մարմին
56	Ստացիոնար բուժման մեջ գտնվող և տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող քվեարկությանը մասնակցել ցանկացող ընտրողների ցուցակ լիազոր մարմին ներկայացվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն***	8, մաս 6	մինչև 1.05.2012 մինչև ժամը 14.00	Ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատության ղեկավար
57	Կալանավորված անձանց պահելու վայրում տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստերին և քվեարկությանը ներկա լինելու ցանկություն հայտնած վստահված անձանց, դիտորդների և զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչների ցուցակը քրեակատարողական հիմնարկի ղեկավարին ներկայացվում է, ***քվեարկության օրվանից 5 օր առաջ***	61, մաս 2 ԿԸՀ որոշում 29.07.11թ. N 44-Ն	1.05.2012-ին	ԸԸՀ նախագահ
58	էլեկտրոնային եղանակով քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակը լիազոր մարմին ներկայացվում է. ***էլեկտրոնային եղանակով քվեարկության սահմանված ժամկետի ավարտից ոչ ուշ, քան հաջորդ օրը ժամը 12:00-ն***	ԿԸՀ որոշում 31.01.12թ. N 19-Ն	մինչև 2.05.2012 մինչև ժամը 12:00	ԿԸՀ
59	Քվեարկության օրն ընտրական տեղամասեր գործուղվող ոստիկանության ծառայողների ցուցակը կազմվում է ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 4 օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն***	8, մաս 5	մինչև 2.05.2012 մինչև ժամը 14.00	ՀՀ ոստիկանություն
60	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը կամ քարտուղարը այդ պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին կարող են ներկայացնել. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ մինչև ժամը 18.00-ն***	43, մաս 4	մինչև 3.05.2012 մինչև ժամը 18.00	ՏԸՀ նախագահ, քարտուղար
61	Կալանավորված անձանց պահելու վայրում գտնվող ընտրողների ցուցակները կազմվում են. ***քվեարկության օրվանից 3 օր առաջ***	8, մաս 11	3.05.2012-ին	Քրեակատարողական հիմնարկի ղեկավար
62	Զինվորական մասում հաշվառված ընտրողների ցուցակը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին տրամադրվում են. ***քվեարկության օրվանից 3 օր առաջ***	10, մաս 5	3.05.2012-ին	Զինվորական մասի հրամանատար

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
63	Համայնքում մեկից ավելի ընտրական տեղամաս կազմավորվելու դեպքում ընտրողներին քվեարկության օրվա, ընտրական տեղամասի համարի, քվեարկության տեղի և ժամանակի մասին ծանուցագիր ուղարկվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ***	11, մաս 6	մինչև 3.05.2012	Լիազոր մարմին
64	Ըստ ընտրատարածքների և ընտրական տեղամասերի ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում է ***քվեարկության օրվանից 3 օր առաջ***	10, մաս 2	3.05.2012-ին	Լիազոր մարմին
65	Ընտրողների ցուցակներն էլեկտրոնային կրիչով կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում է. ***քվեարկության օրվանից 2 օր առաջ***	10, մաս 4	4.05.2012-ին	Լիազոր մարմին
66	Ընտրողների ցուցակները (այդ թվում՝ լրացուցիչ ցուցակները)՝ ըստ ընտրական տեղամասերի, և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները՝ տպագրված երկու օրինակից (ընտրողների ցուցակների, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների 1-ին օրինակը՝ կազմված մատյանի ձևով, 2-րդ օրինակը՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար), ինչպես նաև ՏԸՀ-ի կողմից ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տրամադրում են. ***քվեարկության օրվանից 2 օր առաջ***	10, մաս 3	4.05.2012-ին	Լիազոր մարմին
67	Ընտրողների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը (բացառությամբ զինվորական մասում հաշվառված ընտրողների ցուցակների) տեղամասային կենտրոնում բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է. ***քվեարկության օրվանից 2 օր առաջ***	11, մաս 4	4.05.2012-ին	ՏԸՀ նախագահ
68	Քրեակատարողական հիմնարկի ղեկավարը ընտրողների ցուցակը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին հանձնում է ***քվեարկության օրվանից 2 օր առաջ***	10, մաս 6	4.05.2012-ին	Քրեակատարողական հիմնարկի ղեկավար
69	Ընտրողների ցուցակները՝ ըստ ընտրական տեղամասերի, համացանցում՝ ներբեռնելու հնարավորությամբ տեղադրվում են, ***քվեարկության օրվանից 2 օր առաջ***	11, մաս 2	4.05.2012-ին	Լիազոր մարմին
70	Քվեարկության սենյակի կահավորումն ավարտվում է. ***քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն***	55, մաս 3	5.05.2012-ին մինչև ժամը 24:00	Համայնքի ղեկավար, ՏԸՀ նախագահ
71	Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը՝ նշելով նաև յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակում ընդգրկված ընտրողների թիվը հրապարակում է. ***քվեարկության նախորդ օրը***	6, մաս 8	5.05.2012-ին	Լիազոր մարմին

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
72	Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին քվեաթերթիկները, քվեարկության ծրարները, փաթեթավորված կնիքը, դրոշմակնիքը, հանձնաժողովի անդամների անհատական կնիքները հանձնվում են. ***քվեարկության նախորդ օրը***	57, մաս 7 58, մաս 4	5.05.2012-ին	ԸԸՀ
73	Տեղամասային ընտրական հանձնաժողովին հանձնված բոլոր քվեաթերթիկները, ընտրողների ցուցակների էջերը ստորագրվում են. ***քվեարկության նախորդ օրը մինչև ժամը 24:00-ն***	59, մաս 7	5.05.2012-ին մինչև ժամը 24:00	ՏԸՀ
74	Ընտրողն իրեն ընտրողների ցուցակում ընդգրկելու մասին դիմում լիազոր մարմնին կարող է ներկայացնել. ***մինչև քվեարկության ավարտը***	12, մաս 2	6.05.2012-ին մինչև ժամը 20.00	Ընտրողներ, Լիազոր մարմին
75	Քվեարկության օրը տեղամասային կենտրոնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստն սկսվում է. ***քվեարկության օրը՝ ժամը 07:00-ին***	62, մաս 1	6.05.2012-ին ժամը 07.00-ին	ՏԸՀ
76	Քվեարկությունը սկսվում է. ***քվեարկության օրը՝ ժամը 08:00-ից***	54, մաս 1 63, մաս 1	6.05.2012-ին ժամը 08.00-ին	ՏԸՀ
77	Ձերբակալված անձանց պահելու վայրում ձերբակալված ընտրողների ցուցակը կազմվում և ձերբակալված անձանց պահելու վայրում շրջիկ արկղի միջոցով քվեարկություն կազմակերպող տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամին հանձնվում է. ***քվեարկության օրը***	10, մաս 7 ԿԸՀ որոշում 11.07.11թ. N 26-Ն	6.05.2012-ին	Ձերբակալված անձանց պահելու վայրի ղեկավար
78	Ընտրությունների ընթացքի մասին տեղեկությունները հրապարակվում են. ***Քվեարկության օրը ժամը 09:00-ից*** Քվեարկության օրը ժամը 12.00-ին, 15.00-ին, 18.00-ին և 21.00-ին հրապարակվում են տեղեկություններ՝ ըստ մարզերի (մարզում նաև ըստ մարզկենտրոնների և մարզի 10000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների) և Երևան քաղաքի, մինչև նախորդ ժամը քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ	6, մաս 10	Քվեարկության օրը՝ ժամը 09.00-ին, 12.00-ին, 15.00-ին, 18.00-ին և 21.00-ին	ԿԸՀ
79	Քվեարկությունն ավարտվում է ***քվեարկության օրը՝ ժամը 20:00-ն***	67, մաս 1	6.05.2012-ին ժամը 20:00-ին	ՏԸՀ
80	Էլեկտրոնային եղանակով քվեարկության արդյունքների ամփոփումը և քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը հրապարակվում է. ***քվեարկության օրը՝ ժամը 20.00-ից հետո***	ԿԸՀ որոշում 31.01.12թ. N 19-Ն	6.05.2012 ժամը 20:00-ից հետո	ԿԸՀ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
81	Նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կապված բոլոր գործառնությունները դադարեցվում են ***քվեարկության օրվանից***	26, մաս 7	6.05.2012-ից	Թեկնածուներ, կուսակցություններ (կուսակցությունների դաշինք), բանկեր
82	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն ամփոփվում են և քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը հրապարակվում է. ***ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 10 ժամ հետո***	71, մաս 5	7.05.2012 մինչև ժամը 06:00	ՏԸՀ նախագահ
83	Ընտրական փաստաթղթերի պարկը, չսահմանված նմուշի քվեարկության ծրարների փաթեթը, չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը, քվեարկության արդյունքների արձանագրության երկու օրինակը, գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը և դրոշմակնիքը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնում են. ***քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում***	71, մաս 9 ԿԸՀ որոշում 30.06.2011 թիվ 21-Ն	7.05.2012 մինչև ժամը 08:00	ՏԸՀ նախագահ և քարտուղար
84	Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների հիման վրա տվյալների մուտքագրումը համակարգիչ ավարտվում է. ***քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում***	73, մաս 2 ԿԸՀ որոշում 29.07.2011 թիվ 45-Ն	7.05.2012 մինչև ժամը 14:00	ԸԸՀ
85	Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների քվեարկության նախնական արդյունքներն ամփոփվում և արձանագրությամբ վավերացվում են, ***քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում***	74, մաս 1	7.05.2012 մինչև ժամը 14:00	ԸԸՀ
86	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմումներն ընդունվում են. ***քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն***	48, մաս 1	7.05.2012 ժամը 12:00-ից մինչև ժամը 18:00	ԸԸՀ
87	Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների քվեարկության նախնական արդյունքներն ամփոփվում, արձանագրությամբ վավերացվում, հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով պաշտոնապես հրապարակվում են. ***քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ հետո***	75, մաս 1	7.05.2012 մինչև ժամը 20:00	ԿԸՀ
88	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության մեկ օրինակը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***քվեարկության ավարտից 24 ժամ հետո***	73, մաս 3	7.05.2012 20:00	ԸԸՀ
89	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները, դրոշմակնիքները կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***քվեարկության ավարտից 24 ժամ հետո***	58, մաս 5 և 7 ԿԸՀ որոշում 29.07.11թ. N 41-Ն	7.05.2012 20:00	ԸԸՀ Երևանում, Մարզերում՝ ԸԸՀ մասնագիտացված կազմակերպության միջոցով

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
90	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում վերահաշվարկի աշխատանքներն սկսվում են. ***վերահաշվարկի դիմումների ընդունման համար սահմանված ժամկետի հաջորդ օրը՝ ժամը 9.00-ից, և դադարեցվում են քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, ժամը 14.00-ին***	48, մաս 6	8.05.2012 ժամը 09:00 - 11.05.2012 մինչև ժամը 14:00	ԸԸՀ
91	Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են. ***ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ***	27, մաս 1	մինչև 8.05.2012	Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուներ
92	Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են. ***ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ***	27, մաս 1	մինչև 10.05.2012	Կուսակցություն, Կուսակցությունների դաշինք
93	Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ մշտադիտարկման արդյունքները և հանձնաժողովի եզրակացությունը հրապարակվում և կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ***	19, մաս 11	մինչև 11.05.2012	ՀՌԱՀ
94	Ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվում է, քվեարկության արդյունքներն ամփոփվում և ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշում ընդունվում է. ***քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը***	74, մաս 2, 8 126, մաս 1	11.05.2012-ին	ԸԸՀ
95	ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների վերաբերյալ արձանագրության և ընդունված որոշման օրինակները կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***որոշումն ընդունելուց հետո երկօրյա ժամկետում***	74, մաս 9 126, մաս 9	մինչև 13.05.2012	ԸԸՀ
96	Համամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվում է, ընտրության արդյունքներն ամփոփվում և ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշում ընդունվում է. ***քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը***	75, մաս 2, 6 125, մաս 1	13.05.2012-ին	ԿԸՀ